

1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

Բնակչության դրամական եկամուտները 2010թ. հունվար-հունիսին կազմել են 41872.3 մլն դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են 5.2 տոկոսով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 41059.7 մլն դրամ և ավելացել են 8.5 տոկոսով: Դրամական եկամուտները գերազանցում են ծախսերին 812.6 մլն դրամով:

Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը

	<i>/մլն դրամ /</i>		
	2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս	2010թ. հունվար- հունիսը տոկոսներով 2009թ.հունվար- հունիսի նկատմամբ
Բնակչության դրամական եկամուտները	39789.3	41872.3	105.2
Բնակչության դրամական ծախսերը	37855.5	41059.7	108.5
Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ	1933.8	812.6	42.0

Բնակչության դրամական եկամուտներն ըստ աղբյուրների

	<i>/տոկոսներով /</i>	
	2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս
Ընդամենը եկամուտներ	100.0	100.0
այդ թվում՝		
Աշխատանքի վարձատրություն	61.2	63.0
Սոցիալական և այլ տրանսֆերտներ	19.5	18.9
Եկամուտներ գյուղմթերքների իրացումից	6.5	6.2
Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից	5.1	6.4
Այլ եկամուտներ	7.7	5.5

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենաբարձր տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրությունը՝ 2009թ. հունվար-հունիսին՝ 61.2 տոկոս, 2010թ. հունվար-հունիսին՝ 63.0 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2010թ. հունվար-հունիսին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 37916.6 մլն դրամ (90.6 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 2405.6 մլն դրամ (5.7 տոկոս):

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

	<i>/տոկոսներով /</i>	
	2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս
Ընդամենը եկամուտներ	100.0	100.0
<i>դրանցից օգտագործվել են՝</i>		
Ապրանքների գնման	68.3	70.9
Ծառայությունների վճարման համար	17.3	19.7
Պարտադիր վճարների և զանազան այլ մուծումների համար	5.9	5.7
Ավանդների և արժեթղթերի ձեռք բերումների հավելած	1.6	0.6
Վարկերի դիմաց պարտավորությունների փոփոխություն	-0.2	-1.2
Այլ ծախսեր	2.2	2.4
Կանխիկ դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին	4.9	1.9

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներ: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2010թ. հունվար-հունիսին կազմել են 36374.8 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 2.8 տոկոսով:

Աշխատանքի վարձատրություն*

2010թ. հունվար-հունիսին, համաձայն վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ստացված տվյալների, տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 91315 դրամ և նախորդ տարվա հունվար-մարտի համեմատությամբ ավելացել է 4.4 տոկոսով: Ընդ որում՝ բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 99899 դրամ և նվազել է 0.4 տոկոսով, իսկ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում զբաղվածներինը՝ 84729 դրամ և աճել է 8.8 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի և փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2009-2010թթ. հունվար-հունիսին

	Միջին ամսական անվանական աշխատավարձ		այդ թվում՝			2010թ. հունվար-հունիսի 2009թ. հունվար-հունիսի նկատմամբ	2010թ. հունվար-հունիսի ճյուղերի միջին ամսական անվանական աշխատավարձը տոկոսներով՝ միջին հանրապետականի նկատմամբ
	2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս	բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում	առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, որից՝			
				պետական հատված	ոչ պետական հատված		
Ընդամենը	87464	91315	99899	71698	89797	104.4	100.0
Արդյունաբերություն	84401	93 423	-	80996	98988	110.7	102.3
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	77205	61502	47399	52921	64528	79.7	67.4
Շինարարություն	111591	127 791	-	115339	128 841	114.5	139.9
Տրանսպորտ	90 824	100 159	35000	40254	111 709	110.3	109.7
Կապ	79 928	91000	-	52476	106 241	113.9	99.7
Առևտուր	54514	60147	-	56701	60 188	110.3	65.9
Այլ ճյուղեր	68305	70974	56102	76772	58710	103.9	77.7
Բնակկոմտնտ. և կենցաղսպասարկում	50752	65 701	50 195	67 996	73 343	129.5	71.9
Առողջապահություն	56 881	58 898	49 362	63 952	30 171	103.5	64.5
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	56043	57648	55 779	-	103 458	102.9	63.1
Ֆիզկուլտուրա և սպորտ	53903	49872	50 117	-	35 000	92.5	54.6
Կրթություն	72046	73397	72 512	84 120	55 758	101.9	80.4
Մշակույթ և արվեստ	51813	49571	44849	57 141	36 650	95.7	54.3
Գիտություն և գիտական սպասարկում	41292	41469	46336	34 620	-	100.4	45.4
Ֆինանսներ և վարկ	135136	183675	-	93 733	187 399	135.9	201.1
Կառավարում և պաշտպանություն	139836	137690	138280	56 183	-	98.5	150.8
Հասարակական կազմակերպություններ	68796	66369	-	-	66 369	96.5	72.7

Ճյուղային կտրվածքով միջին ամսական անվանական աշխատավարձն զգալիորեն բարձր է եղել, հատկապես, վարկավորման, կառավարման համակարգերում, շինարարական կազմակերպություններում, որոնք միջին հանրապետական աշխատավարձի համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 201.1, 150.8 և 139.9 տոկոս:

2010թ. հունվար-հունիսին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 45.4 տոկոսից (գիտություն և գիտական սպասարկում) մինչև 80.4 տոկոսի (կրթություն) սահմաններում:

* «Աշխատանքի վարձատրություն» բաժնի տվյալները բերված են համաձայն տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների, որտեղ, սակայն, որոշ ճյուղերում նշված աշխատավարձի ծավալները չեն համապատասխանում իրականությանը: Նշված բերությունները հաշվի են առնված բնակչության դրամական եկամտների հաշվարկներում, որտեղ հաշվետվային տվյալներից գերծ կիրառվել է նաև լրահաշվարկ: -51-

Միջին ամսական անվանական աշխատավարձն
ըստ շրջանների և տնտեսության ոլորտների, 2010թ. հունվար-հունիսին

/դրամ/

	Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ						
	Ընդամենը ԼՂՀ	Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Տրանսպորտ և կապ	Պետական կառավարում	Այլ
Ընդամենը ԼՂՀ	91315	61502	93423	127791	94386	137690	68067
ք.Ստեփանակերտ	106536	55287	70593	142578	115542	155136	75064
Ասկերան	70102	63064	71057	83116	70433	75334	67674
Հաղրուք	61369	63829	72809	93106	58068	71206	56111
Մարտակերտ	90666	62763	173041	65145	66694	67294	59266
Մարտունի	57505	62875	64785	76854	64442	75598	52157
Շահումյան	69756	52782	68504	61538	-	60675	74962
Շուշի	62987	63678	74040	108612	63343	93814	49802
Քաշաթաղ	74368	60152	57325	68909	57749	71483	80031
	Ընդամենի նկատմամբ, %						
Ընդամենը ԼՂՀ	100.0	67.4	102.3	139.9	103.4	150.8	74.5
ք.Ստեփանակերտ	100.0	51.9	66.3	133.8	108.5	145.6	70.5
Ասկերան	100.0	90.0	101.4	118.6	100.5	107.5	96.5
Հաղրուք	100.0	104.0	118.6	151.7	94.6	116.0	91.4
Մարտակերտ	100.0	69.2	190.9	71.9	73.6	74.2	65.4
Մարտունի	100.0	109.3	112.7	133.6	112.1	131.5	90.7
Շահումյան	100.0	75.7	98.2	88.2	0.0	87.0	107.5
Շուշի	100.0	101.1	117.5	172.4	100.6	148.9	79.1
Քաշաթաղ	100.0	80.9	77.1	92.7	77.7	96.1	107.6

Միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը,
2009-2010թթ. հունվար-հունիսին

	2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս
Միջին ամսական անվանական աշխատավարձ, դրամ	87464	91315
Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, դրամ	84752	84161

Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը, 2010թ. հունվար-հունիսին

	Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, %		Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, %
	միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ	նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ*	
2010թ. հունվար-հունիս	32.9	80.0	243.7

* Հաշվարկված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով՝ համապատասխան կիսամյակի միջին ընթացիկ գներով: